ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-3/2019 ծածկագրով շրջանակային համաձայնագրի ընթացակարգի արդյունքում 2015թ դեկտեմբերի 21-ին կնքված պայմանագրում 2019թ հունվարի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Երկարաժամկետ պայմանագիր, կնքված 2016-2020թթ. ժամանակահատվածի համար:

Փոփոխության նկարագրություն ՀՀ Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային աշխատանքների պահպանություն: Համաձայնագրի գինը կազմում է 58 247 727 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում: *ՀՀ 2019 թ. պետական բյուջեի մասին օրենք /ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշում/:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Արտակ Մկրտչյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-3/2019
Պետության կարիքների համար Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման

ք. Երևան **<29> հունվարի 2019թ.**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Առաքելյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2015թ. դեկտեմբերի 21-ին կնքված ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-3 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2019 թվականի համար՝ համաձայն սույն Համաձայնագրի N 3 հավելվածի:

1.4 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2019 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 58 247 727 (հիսունութ միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

2.3 Դեկտեմբեր ամսվա համար նախատեսված վճարումները կատավում է մինչև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գնումների մասով ստանձնած պարտավորությունների կատարման համար նախատեսված վճարումների վերջնաժամկետը:

3. Պայմանագրի 2.4 կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

<<2.4.4 Կատարողը պարտավոր է.

Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման ընթացքում ապահովել.

1. կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրասպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին պատահարի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից>>:

4. Այլ պայմաններ

4.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

4.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

4.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1,2 և 3 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.4Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

5.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	«Անիի ճՇՇ» ՍՊԸ
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3	ՀՀ Շիրակի մարզ ք. Մարալիկ
Կենտրոնական գանձապետարան	«Ակբա կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011012138	Մարալիկ մ/6
ԿՀՀ 02565518	Հ/Հ [illegible]000
	ԿՀՀ 06000[illegible]
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
<<29>> հունվարի 2019թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՏԻԳ-16/1-3/2019 համաձայնագրի

Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Գնումը՝ 2019թ				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
[redacted]						
1	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների	**18,457,443,0**	**15,829,165,0**	**14,070,370,0**	**9,890,749,0**	**58,247,727,0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀԿՀՀ 02565518

(ստորագրություն)

S.S.

ԿԱՏԱՐՈՂ
«Անիի ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ ք. Մարալիկ
«Ակբա կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Մարալիկ մ/ճ
ՀՀ 220363332051000
ՀԿՀՀ 06000133

(ստորագրություն)

Հավելված 2
«<<29>> հունվարի 2019թ. կնքված
պայմանագրի N ԳԱԿ-ՇՀԱԳԲ-15/1-ՏԾԻ-16/1-3/2019 համաձայնագրի

Ֆինանսական տարեսկզբի դրությամբ ունեցվածքի

/<< դրամ>>/

| | | |

Հավելված 3
<< >> հունվարի 2019թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-3/2019 համաձայնագրի

Անիի տարածաշրջան Անիի ճշշ ՍՊԸ

2019 թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհներ

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման կմ 86,6-կմ108,2	Միջպետական II-IV	21.60		Լավ	0.00	586.801	0.000
Հ75, Մ9-Իսակակյան-Գյումրի-Մ7 կ29,6- կմ 60,2	Հանրապետական II-IV	30.60		Լավ	30.60	565.488	17303.933
Հ21, Հ-75-Հորոմ-Արթիկ-Ալագյազ կմ0-կմ8,5	Հանրապետական II-IV	8.50		Լավ	8.50	565.488	4806.648
Հ81, Թալին-Ցամաքասար-Նոր Արթիկ-Հ75 կմ21,5-կմ24,0	Հանրապետական II-IV	2.50		Բավարար	2.50	384.489	961.223
Ընդամենը		63.20			41.60		23071.803
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ							
Հ75, Մ9-Իսահակյան-Գյումրի-Մ7 կմ 29,6- կմ 60,2	Հանրապետական II-IV	30.60	Բավարար ՀԲ(II)	Միջին	30.60	899.640	27528.984
Հ21, Հ75 -Հորոմ-Արթիկ-Ալագյազ կմ0-կմ8.5	Հանրապետական II-IV	8.50	Բավարար ՀԲ(II)	Միջին	8.50	899.640	7646.940
Հ81, Թալին-Ցամաքասար-Նոր Արթիկ-Հ75	Հանրապետական II-IV	2.50	Վատ		0.00		0.000

կմ21,5-կմ24,0							
Ընդամենը		41.60			39.10		35175.924
					Ընդամենը Անիի տարածաշրջանով		**58247.727**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների
նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
ՀՀ 900011012136
ՀՎՀՀ 02565518

L.S.

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Անիի ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ ք. Մարալիկ
«Ակբա կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Մարալիկ մ/ճ
ՀՀ 220363332051000
ՀՎՀՀ 06000133

(ստորագրություն)